*ՆԱԽԱԳԻԾ*

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել <<Հայաստանի Կույրերի Միավորում>> հաշմանդամների հասարակական կազմակերպության (հարկ վճարողի հաշվառման համարը՝ 05500161, գրանցման հասցեն՝ քաղաք Գյումրի, Ղուկասյան փողոց թիվ 98) նախագահ Աբել Հակոբյանը՝ <<Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնա-արտադրական ձեռնարկություն>>սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2016 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարումների նկատմամբ արտոնություններ սահմանելու խնդրանքով, քանի որ կազմակերպությունը ունի ֆինանսական դժվարություններ:

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի <<ժ>> կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, 8-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով <<Հայաստանի Կույրերի Միավորում>> հաշմանդամների հասարակական կազմակերպության նախագահ Աբել Հակոբյանի դիմումը՝ (համայնքապետարանում մուտքագրված 2017 հունվարի 23-ի N574 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել արտոնություն <Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնա-արտադրական ձեռնարկություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2017 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարումների նկատմամբ, ազատելով համապատասխանաբար՝ 176000 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար) Հայաստանի հանրապետության դրամ և 18746 (տասնութ հազար յոթ հարյուր քառասունվեց) Հայաստանի հանրապետության դրամ, ընդամենը՝ 194746 (մեկ հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ռ.ՍԱՆՈՅԱՆ

Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ

Լ.ՋԻԼԱՎՅԱՆ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

Կատարող՝ Ս.Մինասյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնա-արտադրական ձեռնարկություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2017 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարումների նկատմամբ արտոնություններ սահմանելը պայմանավորված է ընկերության ֆինանսական դժվարությունների առկայությամբ, կույրերի միավորման կանոնադրական խնդիրները նվազագույն չափով իրականացնելու աջակցելու անհրաժեշտությամբ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնա-արտադրական ձեռնարկություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2017 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարումների նկատմամբ արտոնություններ սահմանելու մասին>> որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: